



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք  
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,  
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,  
էլ. փոստ՝ [ashotsq.shirak@mta.gov.am](mailto:ashotsq.shirak@mta.gov.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 մայիսի 2024 թվականի N 196-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՔԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ  
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ  
ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 72-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «դ» պարբերության **որոշում եմ**

Անհատ ձեռնարկատեր Քաջիկ Գրիգորյանին (ՀՎՀՀ՝ 57229053, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.00131/2002-06-28, իրավաբանական հասցեն՝ գյուղ Ղազանջի 2 փողոց, 8, ընդհանուր մակերեսը՝ 140 քառակուսի մետր) 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի մայիսի 7  
գյուղ Աշոցք





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք  
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,  
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,  
էլ. փոստ՝ [ashotsq.shirak@mta.gov.am](mailto:ashotsq.shirak@mta.gov.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2024 թվականի N 197 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԵԲԵԿԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-026-009-012-1 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Ռեբեկա Ստեփանյանի դիմումը, որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա գյուղում գտնվող քաղաքացի Ռեբեկա Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 3/1, հասցեում գտնվող, 08-026-009-012-1 կադաստրային ծածկագրով բնակելի տունը / գրանցված 2002 թվականի դեկտեմբերի 20-ին, վկայական N 466932/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 3/1:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի մայիսի 7  
գյուղ Աշոցք

